ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորներ Զ. Բարայեանը, Վ. Գաբրիէլեանը, Բ. Դաղամեանը եւ Հ. Յովսեանը, խստօրէն դատապարտելով Գետաշէնում եւ Մարտունաշէնում խորհրդային զօրքերի կատարած վայրագութիւնները, բողոքի հեռագիր են յղել ԽՍՀՄ պրեզիդենտին, Անվտանգութեան խորհրդին, ՊԱԿի նախագահին, պաշտպանութեան եւ ՆԳ նախարարներին։

4րդ բանակի 23րդ դիվիզիայի վայրագ գործողութիւնները բանակի պատմութեանն աւելացրեց եւս մի սեւ էջ, ասուած է հեռագրում։

Նոյն պատգամաւորները հեռագրեր են յղել ՄԱԿի Գլխաւոր քարտուղար Պերես դէ Կուէյարին եւ ԱՄՆի նախագահ Ջորջ Բուշին։ Տեղի ունեցածը բնութագրելով որպէս ցեղասպանութիւն, հայ պատգամաւորներն առաջարկում են անյապաղ յատուկ դրութեան շրջաններ ուղարկել ՄԱԿի դիտորդներ, միջազգային ուժերի ստորաբաժանումներ եւ Կարմիր խաչի ներկայացուցիչներ։